ՀՀ Արմավիրի մարզպետարանը ՀՀ քաղաքացիներին տեղեկացնում է ժամանակավոր թափուր պաշտոնների վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի
Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի
առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 63-3.3-6)

Մասնակցում է մարզում ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանությանն ուղղված քաղաքականության իրականացմանը.

Մասնակցում է ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանությանն ուղղված ծրագրերի իրականացմանը

Աջակցում է կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների քաղաքականության համակարգման լիազոր մարմին՝ կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների հիմնահարցերի լուծմանն ուղղված տարեկան հաշվետվությունների կազմման աշխատանքներին:

Իր իրավասությունների շրջանակներում մասնակցում է կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների, նրանց ընտանիքների՝ կենսապայմանների և սոցիալիոգեբանական ուսումնասիրության և երեխայի սոցիալիոգեբանական վերականգնման համար անհրաժեշտ միջոցառումների իրականացմանը.

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով, իր իրավասությունների շրջանակներում, աջակցում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի անհատական սոցիալական ծրագրերի մշակման, դրանցով նախատեսված միջոցառումների, խմբային, բազմամասնագիտական քննարկումների իրականացման աշխատանքներին.

պաշտոնատար անձանցից և այլ քաղաքացիներից ստացված« երեխայի կյանքի և առողջությանը սպառնալու, նրա իրավունքների և շահերի խախտումների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու դեպքերում՝ աջակցում է երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության համար իրականացվող աշխատանքներին.

Աջակցում է հանրակրթությունից դուրս մնացած. այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթական իրավունքի պաշտպանության աշխատանքների իրականացմանը՝ նրանց ներգրավելով հանրակրթական կամ հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում.

Աջակցում է խնամակալության և հոգաբաձության մարմնին՝ երեխայի կյանքը կամ առողջությունը վտանգող անմիջական սպառնալիքի դեպքերում, երեխային ծնողներից, նրանցից մեկից՝ կամ այն անձանցից, որոնց խնամքին է հանձնված երեխան, վերցնելու և երեխայի ժամանակավոր տեղավորումն անհապաղ ապահովելու հարցում.

Բժշկահոգեբանամանկավարժական կենտրոնի գնահատման արդյունքների եզրակացության հիման վրա իրականացնում է երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վկայագրումը.

Աջակցում է վկայագրված կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաների՝ ուսումնական հաստատություններ ընդգրկվելու գործընթացին.

Աջակցում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում իրականացվող առանց ծնողական խնամքի մնացած երեխայի կենսապայմանների և սոցիալիոգեբանական ուսումնասիրության իրականացմանը, առանց ծնողական խնամքի մնացած երեխայի մասին խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից ներկայացված փաստաթղթերի և առանց ծնողական խնամքի մնացած երեխայի հետագա խնամքը տրամադրելու՝ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն կամ շուրջօրյա լրիվ խնամք տրամադրող այլ կազմակերպություն ընդունելու, կամ խնամատար ընտանիքում տեղավորելու կամ կենսաբանական ընտանիք վերադարձնելու, կամ որդեգրման հանձնելու, կամ խնամակալ կամ հոգաբարձու նշանակելու նպատակահարմարության, վերաբերյալ սոցիալական աջակցության տարածքային գործակալության տրամադրած նախնական եզրակացության լրիվ, օբյեկտիվ և համակողմանի ուսումնասիրության և ստացված փաստաթղթերի ու տեղեկատվության համադրման, վերլուծության արդյունքում մասնակցում է երեխայի հետագա խնամքը տրամադրելու՝ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն կամ շուրջօրյա լրիվ խնամք տրամադրող այլ կազմակերպություն ընդունելու, կամ խնամատար ընտանիքում տեղավորելու կամ կենսաբանական

ընտանիք վերադարձնելու, կամ որդեգրման հանձնելու, կամ խնամակալ կամ հոգաբարձու նշանակելու նպատակահարմարության մասին եզրակացության կազմման աշխատանքներին,

Աջակցում է խնամատար ծնող դառնալու ցանկություն հայտնած անձից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ստանալուց հետո և սոցիալական աջակցության տարածքային գործակալության կողմից տրված խնամատար ծնող հաշվառելու վերաբերյալ եզրակացության հիման վրա« Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում խնամատար ծնող դառնալու հնարավորության մասին դրական կամ բացասական եզրակացություն տալու աշխատանքների իրականացմանը.

Աջակցում է բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում բնակվող (խնամվող) երեխային կենսաբանական ընտանիք վերադարձնելու մասին երեխայի ծնողների (ծնողի) կամ ընտանիքի չափահաս այլ անդամի գրավոր դիմումի դեպքում կատարած ուսումնասիրության արդյունքում համապատասխան եզրակացություն (դրական կամ բացասական)՝ տալու աշխատանքների իրականացմանը.

Երեխային բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատություն ուղեգրելու հնարավորության մասին առաջարկությունը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված անհրաժեշտ այլ փաստաթղթերը սոցիալական աջակցության տարածքային գործակալության կողմից ստանալուց հետո« խնամքի տրամադրում հայցող երեխայի ընտանիքի՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված լինելու և սոցիալապես անապահով լինելու դեպքում« աջակցում է բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատությունում երեխային տեղավորելու այլընտրանքային տարբերակների ուսումնասիրման աշխատանքներին, և դրանց բացակայության դեպքում« մասնակցում երեխային բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատություն ուղեգրելու վերաբերյալ գրավոր եզրակացության կազմման աշխատանքներին:

Աջակցում է երեխայի իրավունքների պաշտպանության գործունեության մասին տարեկան հաշվետվության ներկայացման աշխատանքներին:

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- առողջապահություն մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն մեկ տարվա ստաժ, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երկու տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.
- Հայաստանի Հանրապետության Սահմանադրության« Հայաստանի Հանրապետության քաղաքացիական, ընտանեկան օրենսգրքերի, «Քաղաքացիական ծառայության մասին», «Երեխայի իրավունքների մասին», «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին»« «Հանրակրթության մասին» « «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Սոցիալական աջակցության մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 18-ի «Որդեգրման կարգը և Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություններում կամ հյուպատոսական հիմնարկներում օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց և Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից որդեգրված՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող երեխայի հաշվառման կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28ի N 1919-Ն որոշման մեջ լրացում կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 269-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 8ի «Երեխային խնամատար ընտանիք հանձնելու կարգը, յուրաքանչյուր երեխայի պահելու համար խնամատար ընտանիքին ամսական վճարվող դրամական միջոցների և երեխայի խնամքի և դաստիարակության համար խնամատար ծնողների վարձատրության վճարման կարգն ու չափը և խնամատար ընտանիք երեխային դաստիարակության հանձնելու մասին պայմանագրի ձևը հաստատելու մասին» N 459Ն որոշումների և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում. համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

- աշխատավարձի չափը՝ 129.634 /մեկ հարյուր քսանինը հազար վեց հարյուր երեսունչորս/ ՀՀ դրամ

Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնի առաջացման հիմքի վերացման ժամկետն է՝ մինչև քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

Վերը նշված պաշտոնը կարող է զբաղեցվել՝ տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները: Քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը 65 տարին է:

Հանրային ծառայության ընդունվելու իրավունք չունի այն անձը, որը՝

1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) դատական կարգով զրկվել է հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից.

3) տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը հանրային ծառայության տվյալ պաշտոնի նշանակվելու դեպքում կարող է խոչընդոտել իր լիազորությունների իրականացմանը.

4) դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.

5) օրենքի խախտմամբ չի անցել ժամկետային պարտադիր զինվորական ծառայություն:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմ (ք. Արմավիր, Աբովյան 71, հեռ. 0237 2-16-29):

Դիմող ՀՀ քաղաքացիները Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմ (ք. Արմավիր, Աբովյան 71) պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

* գրավոր դիմում (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),

* անձնագրի պատճենը,

* կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները),

* աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում).

* արական սեռի անձինք նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,

* մեկ լուսանկար 3x4 սմ չափսի:

ՀՀ քաղաքացին փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9:30-ից մինչև 17:30-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 18.03.2019թ.